

ԳՐԻԳՈՐ ԶՕՆՐԱՊ

ՈՒՐՈՒՍԳԾՈՂԸ

Զուտ գրական սահմաններու մէջ, Գրիգոր Զօնրապի նորավէպերը կը ներկայացնեն իր լաւագոյն, իր մնայուն գործը, առ հասարակ:

Սխալ կարծիք մը չէ անշուշտ այս, ո՛չ ալ չափազանցումս:

Բայց ե՛ւ իր «Ծանօթ Դէմքեր»ը՝ իրենց տեսակին մէջ, գրական, արուեստի իմաստովն ալ, ետ չեն մնար բարձրագոյն տեղերէն մին գրաւելու՝ իր արտադրութիւններուն մէջ: Յայտնութիւն մը եղած էին անոնք մեր գրականութեան մէջ: Այսուհանդերձ, կը խորհիմ՝ թէ անոնք տակաւին արժանի ուշադրութիւնը, բո՛ւն ուշադրութիւնը չեն ստացած:

Զօնրապի գրական ճիրքերը՝ ամէնէն աւելի գրական այս սեռին մէջ փորձի ենթարկուած են: Եւ հեղինակը միշտ ալ անսայթաք վերջացուցած՝ իր ձեռք առած ուրուագիծը: Ենթականերէն ամէնքն ալ, անշուշտ, համակրելի դէմքեր չեն եղած իրեն համար. Բիւզանդ Քէչեանը նուազ յաջողութեամբ չէ գծուած սակայն:

Հարկաւ, այսօր ժամանակին հետ, դոնէ մեղի համար, հինցած նկարներ կան հոն. յանցանքը Զօնրապի վրձինէն չի վար, այլ գծուած անձերէն՝ որ դադրած են շահագրգռական անձեր ըլլալէ. այս վերջինները չճանչցող մը մանաւանդ, անոնց էջերը կը դարձնէ իրարու վրայ:

Զօնրապ սրամիտ է այս ուրուագիծերուն մէջ, այս դիմանկարներուն մէջ, բայց ո՛չ երգիծաբան մը: Զինքը երբեք չփոթելու չէ Յակոբ Պարոնեանին հետ, որուն «Ազգային ջոջեր»ը բոլորովին տարբեր սեռ մը կը ներկայացնեն: Զօնրապ լուրջ է իր ձեւերուն մէջն ալ. կը հեղնէ երբեմն, բայց չի ծաղրեր: Այլ՝ միշտ սը-

րամիտ է. Փրանսական նուրբ սրամիտութեամբ մը, որուն նմանը չկար մեր մէջ: Եւ իր սրամիտութիւնը կը հիմնէ, անխուսափելիօրէն, իրականութեան վրայ. տեսնուած, բռնուած (saisi) իրականութեան վրայ: Զօնրապ ամէնէն աւելի իր այս «Ծանօթ Դէմքեր»ու շարքին մէջ սրամիտ է. այս մասին՝ ինքզինք կը գերազանցէ: Եւ իր գծած դէմքերը միշտ ալ ճիշտ են:

Բայց լուսանկարիչ ալ չէ: Իր արուեստին լաւագոյն երանգներէն մին հո՛ն կը գտնուի: Մանրամասնութիւն չի տար, տալով հանդերձ ամբողջութիւնը, հոգին, էականը: Ասոր համար, ուրուագիծէ մըն ալ շատ աւելի են իր այս գործերը: Ահա՛ դադանքը: Աննախընթաց էր, եւ մնաց եղական: Ո՛չ ոք կրցաւ այնքան լաւ ու կատարեալ կերպով ներկայացնել, օրինակ, Զապէլ Ասատուրը, Արփիար Արփիարեանը, Եղիա Տէմիրճիպաշեանը, Բիւզանդ Քէչեանը, որքան ինք ըրաւ. այս անձերը՝ իրենց ուրուագիծին մէջ կ'ապրին, ներկայ են, կը խօսին:



Զիրքը ունէր:

Նկարիչ ծնած մարդ մըն է Զօնրապ, սուր ու թափանցող աչքերով. ամէն բան, մանաւանդ ամէնէն ցայտուն դիմերը տեսնելու, գտնելու, վեր հանելու աչքերով ու տաղանդով: Հիմնական նկարագիրները փնտռած է իր գծած դէմքերուն մէջ:

Իր «Զինական նամականի»ն սկսաւ հրատարակուիլ Երկրագունդին մէջ, 1884ին: Հաւանաբար, եւ մինչեւ անգամ կարելի է ստուգապէս ըսել՝ թէ Զօնրապ կարդացած ստուգապէս ըսել՝ թէ Պարսկական նամակէր Մոնթեսքիէոյի «Պարսկական նամակները». լաւ գիտէր Փրանսական գրականութիւնը, ճանչնար Փրանսական գրականութիւնը, եւ Մոնթեսքիէոյ հռչակաւոր էր նաեւ օրէնքին վրայ իր հրատարակած ազատամիտ բնութեանը, մանաւանդ որ յօդուաբնութեանը (Մամիս, 14 Փետր. 1892), ծի մը մէջ

անիկա արտայայտուած է այս գործին վրայ. հետեւաբար՝ զայն կարդացած էր, կամ կը ճանչնար: Բայց Զօնրապի «Զինական նամականի»ն խորագրերնու հետեւողութիւն մը միայն կարելի է սեպել: Ասիկա օտար երկիրներէ գրուած նամակներու միջոցով արտայայտուելու երեւակայական ձեւ մըն է, ուշադրութիւն գրաւելու միտումով: Փրանսացի գրողը ընտրած է երկու պարսիկներ, որ իրարու դադափարներ կը յայտնեն զանազան նիւթերու վրայ. մինչ Զօնրապի նամակագիրը Զինաստանէն է, ընտրած ըլլալու համար, անշուշտ, աւելի տարօրինակ ու հոռուոր անշուշտ, աւելի տարօրինակ ու հոռուոր երկիր մը: Բայց իր նիւթին մէջ Զօնրապ հետեւողական չէ. իր ինքնուրոյն գաղափարները ունի, եւ իր նիւթը հայկական է:

Երբ իր «Զինական նամականի»ն հրատարակուեցաւ, հազիւ քսաներեք տարեկան կար. բայց իր ինքնատիպ նկարագիրը, իր գիտակցութիւնը, տեսնելու իր արտակարգ կարողութիւնը արդէն կը պարտադրեն իրենց գոյութիւնը: Այս «Նամականի»ն պիտի բաւէր առանձինն՝ այս մասին. հայուն վրայ իր գրածը գլուխ գործոց մըն է արդէն. այսօր ալ դեռ կ'ապրին ծոց մըն է արդէն. այսօր ալ դեռ կ'ապրին իր այդ տողերը, որովհետեւ ճիշտ է, իրաւունք է իր տուած պատկերը: Իրմէ առաջ, եւ նոյնիսկ մինչեւ այժմ, իրեն չափ հարգատուէր, իրեն չափ կատարեալ ու ամբողջական իմաստով, ու այս ալ այնքան քիչ տողերու մէջ, ո՛չ ոք կրցաւ ներկայացնել մանաւանդ արտասահմանի հայը: Այս պատկերին ինքնատիպ ու անստորկի-լիօրէն իրական կրկնակ առաքելութիւններուն համար՝ չեմ վարանիր լայն արեւելուն համար՝ չեմ վարանիր լայն արեւելուն համար մը ընելու. Զօնրապ կը գրէ հոն, տաղու մը ընելու. Զօնրապ կը գրէ հոն. «... Հայն՝ հոս ալ նոյնն է ինչ որ է ամենուրեք, ճանճրացուցիչ հիւր մը որ կը կարծէ թէ բոլոր աշխարհ զինքն ասպնջա-կանելու համար ստիպուած է, քանի որ

իրեն յատուկ տեղ մը չունի. որ նախադաս կը համարի ուրիշի հոգեբով գրադիլ, քանի որ իրեն մտածելու այլեւս բան մը մընացած չէ. որ աշխարհի գործերը կը տնօրինէ, քանի որ իրենները կարգադրելու բախտը չունի. որ եւ ոչ մէկ տեղացի է ու ամէն տեղ կը գտնուի. որ ամէն լեզու կը խօսի, քանի որ իրենը հասկցող չկայ. որ ուրիշներու հետ կը վստակի, կը ժողովի, կը ցաւակցի ու կ'արտասուէ, անշուշտ թողով ուրիշներուն, որ անոնք ալ իր վրայ արտասուեն. որ ազատութիւնը, հաւասարութիւնը, եղբայրութիւնը կը սիրէ, քանի որ աշխարհ կը պնդէ թէ լաւ բաներ են. տկարին՝ բարեկամ, քանի որ չոր մաղթանքէ զատ ուրիշ կերպով անոր օղնութեան չի կրնար հասնիլ. բռնաւորին՝ թշնամի, զոր պատաւ կնկան մը պէս անիծելու ուրիշ բան չ'ընէր. որ իր ապրած միջոցներին գիտէ յարմարիլ, քանի որ միջոցները իրեն չի յարմարիր. որ ամէն տաղանդութիւն կ'ընդունի եւ կ'անդրադարձնէ. կատարեալ մեղրամոմէ մարդ, որու վրայ իրեն հետ կենակցող ամէն ազգի կնիքը կը թողու մոլորութեանց եւ առաքելութեանցը հետ. վերջապէս մարդկային քիչութեանցը հետ. վերջապէս անհատական մէկ ազգին լեզու, աներես ու անառակ մէկ գաւառ, որ կը մաքառի բախտին եւ մարդոց դէմ որ զինքը աւելորդ արարած մը կը դաւանին. որ ի գուր կ'աշխատի անհետանալու երկրիս երեսէն կամ հանգստեան վայր մը գտնելու հոն, միշտ չփոթած, միշտ գուարթ ու կատարելապէս անտարբեր ու փրկութեան չափ մը՝ վարդապետին քարոզին դէմը, ինչպէս կանանց անհատաւորութեանը առջեւ»:

Այս մէջբերումը՝ որ կը ներկայացնէ Հայուն դէմքը, մեր հեղինակին «Ծանօթ Դէմքեր»ուն սեռին դուրս ելլել չի նշանակեր անշուշտ: Ուղեցի իսկոյն ընդել իր ուրուագիծի, նկարագիրներ տալու իր ուրուագիծի, զոր անիկա ունեցած է, ու մշակած ալ, իր հազիւ չափահաս տա-

անհոգութիւնը ա'լ ճշմարիտ պէջանք մը կը դառնայ: Ահա՛ իր գրականութեան յատկանիշներէն մին»: Բայց, հո'ւ ալ Չօհրապ կը տարբերի Արփիարեանէն. երբեք անխնամ չէ եղած ու հանրութեան մօտեցած է միշտ յարգանքով, ինչքան ալ ուրիշներուն պայմաններէն, կանոններէն դուրս ելլելու միտումը, եւ զարտուղութեան սէրը ինք ալ ունեցած ըլլայ իր կեանքին ու գործին մէջ: Բայց իրարու պիտի նմանին, երբ Չօհրապ հաստատէ, թէ Արփիար Արփիարեան՝ «Գրականութիւնը, իր տարփանքը, զինքը հրապուրող սիրուհին» կը նկատէ:

Քիչ մը աւելի անդին, Արփիար Արփիարեանի դիմադրին մէջ, դարձեալ իր մէկ ուրիշ նմանութիւնը կը մատնէ անոր հետ, երբ կը գրէ այս վերջինին ուղղութեան մասին: «Իր ժողովրդական դաւիթ, գրեթէ շուկայի մարդու ձեւերը կը սիրեմ», կը գոչէ արդարեւ Չօհրապ, եւ կը շարունակէ աւելի յստակ ու մեկին կերպով. — Իր մշտնջենական պատիւը պիտի ըլլայ մեր մէջ, իր Օրումն կեանքներով, առաջին ինքը տանելը, մօտեցնելը գրականութիւնը ժողովուրդին՝ փոխանակ ժողովուրդը բերելու անխախտ գրականութեան մը անմատչելի բարձունքին»:

Բայց եւ Չօհրապ գուշակութիւն մը անդամ կ'ընէ Արփիար Արփիարեանի ասպտակային համար: «Ի՞նչպէս պիտի ըլլայ այս կեանքին ծերունութիւնը», — կը հարցնէ, եւ իսկոյն կ'ըզրակացնէ հաստատ տեսութեամբ. — «Ինչ որ ամէնէն հաւանականն է, այն է որ քանի մը տարի վերջը իր մեծ իմացականութիւնն ալ այն մշուշին մէջ մտնէ՝ ուրիշ իր գոյութիւնը երբեք դուրս չէ կրցած ելլել»: Ստուգիւ, եղբայրասպան պնդակ մը՝ յաւիտենական «մշուշին» մէջ նետեց այս մարդը, բայց ո'չ իր գործը, որ է ինքնատիպ, յանդուգն, ու կը մնայ մեր իրապաշտ գրողներուն լուսա-

դոյններէն մին, իսկ թուականի իմաստով՝ անկասկած առաջինը:

Յայտնի է որ Չօհրապ՝ Օրմանեանին մէջ սիրած է իր խանդը. «Այս եկեղեցականը, — կը գրէ, — որ Տիրայր կը ստորադրէ հայ լրագրութեան մէջ, մեր եպիսկոպոսներուն երիտասարդն է, ինչ որ մեծ բան է հարկաւ, եւ մեր երիտասարդներուն եպիսկոպոսն է՝ ինչ որ աւելի մեծ բան մըն է»: Իր մասին կ'ըսէ նաեւ, թէ «պարզութեամբ եւ համեստութեամբ» կը կատարէ պարտքը՝ իր սրբազան կոչումին: Ե'ս ալ ճանչցայ Օրմանեան պատրիարքը. չա'տ հետեւ էր սակայն համեստ ըլլալէ, փոքր բաներու մէջն անդամ: Յայտնորէն փառասէր էր: Հաւանաբար Չօհրապ իր համակրութեան զօհը եղած ըլլայ այս մասին:

Եղիա Տէմիրճիպաշեանին հետ ո'չ մէկ նմանութիւն ունի անշուշտ Չօհրապ: Թէ՛ որպէս մարդ, եւ թէ՛ որպէս գրող: Առաջինը եղած է անօրմալ մը ու տխուր, վիպապաշտ ու յոռետես իր բոլոր գրական արտադրութիւններուն մէջ. մինչ երկրորդը՝ առողջ ու հաւասարակշիռ, եւ իրապաշտ՝ իր գրականութեան մէջ: Բայց եւ Չօհրապ դայն կը սիրէ ալ, անոր մէջ զբոսած ըլլալով անկախութիւն, անկեղծութիւն ու գրական արժէք:

Կը սկսի դայն ներկայացնել որպէս «գիււահար ոգի մը. արծուի եթերային ճախրանքը սարէ ի սար, երբեմն աւելի անդին ուր պարապութիւնը կը տիրէ ա'լ. կամ հաւասարութիւնը կորսնցուցած օդապարիկի մը ոտոտոտող ելեւէջները, ընդթարչած ելով ընթերցողը իր ետեւէն՝ խօլ, անբեւեռ ուղղութեան մը մէջ»: Եւ ա'յսպէս կը դառնէ դայն, կ'աւելցնէ ալ Չօհրապ, նոյնիսկ անոնք որ իր համակրողներն են մեծ մասով: Եւ կ'ըսէ դեռ. — «Յետոյ կարծեմ քիչ մը իրաւամբ կը զայրանան հասակը, եսամոլ գրականութեան մը դէմ որ Եղիայինն է»: Բայց ասիկա՝ վիպա-

պաշտ գրականութեան հեռեանքներէն եղած է միշտ. աւելի՛ անձին, ի'ր անձին ու ի'ր անձը շահագրգռող մարդոց վրայ միայն նայել:

Այսուհանդերձ, եթէ նոյնիսկ ճիշտ ըլլար այս ամէնը, — կ'ըսէ Չօհրապ, — Եղիային գրական արժանիքը դարձեալ պիտի չափախէր, թէ «աշխարհաբարի այս նարեկացին» պիտի չմոռցուի, չուրացուի. որովհետեւ, կը վճռէ ալ, «ամէնուս համար՝ Տէմիրճիպաշեան, իրեւ արձակագիր, մէկ հատիկ է հիմախուս գալուստեան մէջ»:

Եւ իրմէ կուտայ սա պատկերն ալ, ո'չ նուազ յատկանշական. — «Այն բարձունց վրայ կամ այն անդունդներուն մէջ ուր ներեալ է Եղիային խոյանալ կամ դահանգի, վհուկ մը կամ վարդապետ մը ըլլալ պէտք է, եւ Եղիան երկուքն ալ միանգամայն»:

Իսկ իր հմտութեան մասին՝ Չօհրապ զմայլումի եւ երկիւղածութեան բառեր ունի:

Բայց հիւանդ Ասատուրին վրայ գրելը Չօհրապի համար գիւրդին եւ գոռար պիտի ըլլար միանգամայն. գիւրդին՝ որովհետեւ դայն չա'տ աղէկ կը ճանչնար, գոռար՝ որովհետեւ իր բարեկամն ու աշխատակից ընկերը եղած էր: Եւ սակայն Չօհրապ միշտ յաջող նկար մը պիտի տայ անկէ ալ:

«Հեռուէն՝ բարձր ու պարթեւ հասակ մը որուն պարարտ շքեղութեանը քով զբոսելու, պղտիկ մնացած, աչքի կը դարնէր», — կը գծէ արդէն անխալ ու խօսուն վրձնով մը:

Ու անոր «հագուստ ու կապուստը», ինչպէս եւ քալուածքը քանի մը տողերու մէջ պատկերացնելէ յետոյ, կը շարունակէ. — «Ամառ ձմեռ, առտու իրիկուն, ահալին ծրարներ, հսկայ դէպեր հայերէն լրագիրներու, հանգէսներու, որոնք իր երկու գիւրդայաններէն դուրս կը սարդին,

գլուխին կը հանեն, կարծես չնշահեղձ չըլլալու սարսափով: Շատ անգամ ալ տետրակներ, սեղմուած թուին տակ, երբեմն գրքերու ամբողջ հատորներ դուրս տեղէ տեղ կը փոխադրէ ամէն օր, կը տանի կը բերէ, կը շտկէ կը մաքրէ, կը դոցէ կը բանայ, կը նոթագրէ»:

«Ատկէ անդին մնացածը՝ գեղեցիկ երիտասարդ մը, ուսեալ ու պարկեշտ տղայ մը »:

Հրանտ Ասատուրին արտաքին պատկերը աւելի ամբողջական պիտի չկարենար տրուիլ:

Իսկ գրական իմաստով:

«Գրականութեան մէջ Հրանտը, ինչպէս կ'անուանենք զինքը, մեր աշխարհաբարին դայեակը ու ստնտուն է», կը պատասխանէ Չօհրապ:

Եւ կ'ըզրակացնէ. — «Այս երիտասարդը ուրեմն, կարգի ու կանոնի սիրահար մըն է ամէն բանի մէջ»: Բայց մ'ը չի քաշուիր քննադատելէ ա'յս սէրը, զոր հոնքը թշուրթեան ոգիին հակառակ կը նկատէ: Հոն տկարութիւն մը, վախկոտի մը զգուշութիւնը կը տեսնէ: Որուն վախճանը տափակութեան կը հասնի: Եւ կը հաստատէ նաեւ թէ այս միտքին՝ Հրանտին հետ քսան տարուան բարեկամ մըն է, որովհետեւ, — կը պատճառաբանէ, — «մարդ իր չունեցածին կարօտը կը քաշէ»:

Չօհրապ երանի կուտայ Հրանտ Ասատուրին՝ «որ ամէնուն բարեկամն է, ի հարկէ կը բաղձայ որ ամէնն ալ իրեն բարեկամ մնան»: Եւ կը զմայլի անոր «համբերող սրտին, ամէն հակասութեանց մէջ հաշտութիւն գոյացնելու ձգնող ճարտարութեան վրայ»:

Իսկ անոր պատմական աշխատութեան մասին խօսելու առթիւ, Չօհրապ դայն կ'անուանէ «անուններու եւ թուականներու ժողովածու մը, զոր կարգացողը հին գերեզմանոցէ մը դուրս Ելլողի տպաւորութիւնը կ'ունենայ»: Իր այս գիտողութեան

